

մին են նորա, հոգի՛ որ ելունէ՛ ոչ ես
 դառնայ. վասն որոյ դարձուցեալ զցա-
 սուծն բարկութեան 'ի գութ ողորմու-
 թեան, 'ի գալ զարնանային եղանակին՝
 երաց զգրունս երկնից, և ցոզեաց գա-
 ռաա առնձրես 'ի վերայ երկրի. և ետ
 զգորութիւն հողոյ, որ առատապէս ետ
 զպտուղ սերմանց. և սոքն օր քան զօր
 սկսաւ թուլանալ. որպէս 'ի ժամանակս
 Նոյի զհեղեղ ջուրցն նուազեցոյց. և 'ի
 հասանել ժամանակի կալց և հնձոց
 երարձ զսոքն յերկրէս. և յաղեցոյց
 զպս մարդկային ազգի, տալով զիսու-
 թիւն յանձինս նոցա. քանզի ոչ միայն
 սով հացի էր, այլ ամենայն ուտելոց,
 ընդեղինաց և բարջարեղենաց, որ ոչ
 դատնիր. և թէ գտանիր ևս, այնպէս
 թանկագին, զոր ոչ դր բաւէր հատու-
 ցանել նմա զգին արձաթով: Որ և սակս
 լու իմանալոյ բարեպաշտութեան ձե-
 ղում՝ զոմանց իրաց զգինսն աստ դրով
 գրոյմել, զի տեղեկացեալ ձեր ժամա-
 նակիս գառնութեանն՝ մեծաւ հիաց-
 մամբ զարմասցիք: Չարեկ մի ցորեան՝
 է զուռուչ. չարեկ դարի կամ կորեկ՝
 Ծ զուռուչ. լիտր մի իւղ՝ վեց զուռուչ.
 լիտր մի հաց՝ երեք զուռուչ. լիտր մի
 պանիր՝ Գ զուռուչ. լիտր մի բրինձ՝ Գ
 զուռուչ. հատ մի հաւ՝ զուռուչ և կէս.
 հատ մի հակիթ՝ ժե ստակ. լիտր մի
 քաղցու՝ Գ զուռուչ. լիտր մի չամիչ՝ Գ
 զուռուչ. լիտր մի սոխ՝ Բ զուռուչ. լիտր
 մի սխտոր՝ Ը զուռուչ. լիտր մի շոգքամ՝

կամ զղուժ կամ բանծոր Ո. Ո. զուռուչ.
 և զայլնս ըստ այսմ՝ զիտասցիք: Եւ զայ-
 ստակ վասն այն գրեցի, որպէս զի յե-
 տաղայ գալօգք և ընթերցօգք այսր
 պատմութեանս՝ զգուշացեալք 'ի մե-
 ցաց՝ մի բարկացուցանիցէք զԱրարիչն
 երկնի և երկրի, և վասն յոնցանայ
 ձերոց արդիւնաւորիցիք ընդունել զոյս
 պիտի պատիժ պատուհասի յարգարա-
 դատ Տեառնէն. որովհետեւ մեք ան-
 ձամբ զիրքձ առեալ այդպիսի պատժոյ
 և բարկութեանս՝ կամեցաք զրել 'ի
 քարտիզի զոյսպիտի աղէս դառնու-
 թեանս. զի մի և զօրք յանցանօգք զը-
 ղաւ հրամանին Աստուծոյ՝ ընկալցիք
 զայսպիսի վրէժխնդրութիւն յանալառ
 պատաւորէն. այլ ըստ օրինաց և հրա-
 մանի Տեառն չարժեալք՝ ընկալցիք զվը-
 տուղ արդեանց և վաստակոց ձերոց,
 և կեցցիք խաղաղութեամբ:

Վասն որոյ ես նուաստ և յետնեալ
 ծառայակից ձեր 'ի Քրիստոս, Յակոբ
 մեղապարտ և անարժան զպիր, ըստ
 իմոյ տգէտ և ախմար գիտութեանս,
 որովհետեւ ականատես եղէ ամենայն
 եղիլոցս, զրեղի պատմողբարթ թարց
 իմիք ստութեան՝ ումենայն ճշմարտու-
 թեամբ. որպէս զի ընթերցօգք այսր
 պատմութեանս՝ օրհնաւաք բերանով
 վառս վերառաքեսցիք ամենազօր տե-
 ղութեանն Հօր և Որդոյ և Հօգւոյն
 Սրբոյ յամենայն յախտեանս յաւիտե-
 նից. ամէն:

ՄՐԻԿՔ ԵՒ ՀԵՂԵՂՔ Ի ԹՈՐԹՈՒՄ

Ի 5 օգոստոսի թողուցի զլրդիւում,
 տարբեր ճամբայ մը բռնելով՝ իմ՝ Թոր-
 թումի առաջին ուղևորութեանս ճամ-
 բէն: Էռչք գեղն անցանք: ... Իրիկունը
 Քարահուրդ գեղը կեցանք: ... Այդ չե-
 զած, կարաւուց կրկնայէն արթնցանք.
 փութով ճամբայ ինկանք, և երկուցեան
 չորսին 'ի Սահրէր էինք. ուր գնացի
 օթազայելու այն ասպնջականին տունը՝
 ուր նախնիքաց տարին բնակեր էի:
 Հաղու իջնաներ էինք, ուժգին մրիկ

մը, որու գալուստը հեղձուցիչ տաքէն
 և մթնոլորտին ծանրութենէն առաւօ-
 տունէ 'ի վեր կ'իմացուէր, վրթաւ
 յանկարծակի որոտմամբ, որոց բոմ-
 բինը աւելի ահարկու կ'ընէր լերանց
 արձագանքն: Անձրին և կարկուտն ան-
 կարծելի սաստկութեամբ ժամէ մը ա-
 ւելի թափեցան: Սակայն այս մէտէո-
 ղական երևութէն քիչ խռովելով, և
 այսպիսի ատեն մը ծածկի տակ զըս-
 նուելուս բողբոջին գոհ, հանդարու-

թիւամբ կը ճաշէի, երբ սարսափելի ճայ-
թիւն մը՝ սրտամանէն շատ ասարբեր, և
նման հեռաւոր ուժակիւմութեան մը
հասցատէպ հարուածայ, անէն դուրս
հանեց ինձ ընկերակից գեղին քանի մը
բնակիչքը. ես ալ ելայ: Հագիւ շեմին
վրայ հասանք, անտանք որ կ'իջնէր ձո-
րէն, այն անդն ուր յառաջ կը դրուէր
թորթում—Սու, ջրայ, փրփրոյ, քարանց
ահաղին զանգուած մը, որ իր վրայ կը
հարկէր խրոցուցիչ շառաչումք մը:
Անհարին է՝ այս թափառէս աւելի ա-

հեղամեծ աւերման պատկեր մ'երևա-
կոյիլ, որ ամենայն ինչ իր անցից վրայ
վեր 'ի վայր կ'ընէր: Ժայռից հատածք
և ծառոց կոճեղք կ'ստատաւէին ջրոց
մէջ իբրև յարգի շիւղք վերամբարձեալք
'ի հողմոյ. այս կարկառին եակ կ'ընթա-
նար սղղեալ հեղեղատն, որ կը փորէր
բարձր ափունքը և ամբողջ պարտէզ-
ներ կը սանէր: Մի և նոյն ժամանակ
գեղին մանկունքն ափոսոյ վրայ կը վա-
զէին ժողովուրդ կարմրախայտ ձկունս:
Այս կարմրախայտ ձկունքս, զգացեալք



Թորթումի հովտին գեղ մը.

'ի բնագլխանէ, մտ մարդոց թաց խո-
ւոյն վրայ նետուեր էին, հեղեղէն թա-
ւալած քորանց բաղխմանէն աղատե-
լու համար, փանի մը վայրկենի մէջ ժո-
ղովելով առատութեամբ բերին ինձի
այս կարմրախայտներէս. ոմանք լի-
պրէէ մ'աւելի կը կշռէին: Թորթումի
հովտին մէջ գրեթէ հանապազօրդեան
հանդիպած միրիկէն հետևաբար միշտ
հեղեղատին ողողմունքը չեն պատճա-
ռեր. բայց սակայն այս վերջինքս յա-
ճախ կը պատահին, և բնակիչք այս

չարիքս խափանելու համար, ուսնի-
ներ կը անկեն ափոսոց վրայ, քարամբք
լցեալ խուրճար մէջերնին գնելով. շատ
անգամ՝ կը բաւեն այս թումբերս արգի-
լելու զ՛յուրս հողը ասանելու և պարափ-
զայ ծառքը արմատախիլ ընելու: Այլ
ոչօգմունք կը տեղափոխեն միշտ հեղե-
ղատին անկողինը, և այսպէս ափունքի
մը տէրը կը կորսնցընէ իր կալուածը
յոգուտ հանդիպակաց տիրոջ, զոր կ'ըն-
դունի առճիտ օրէնքն:

Դ. ՏԷՅՐՈՒ

Ճանապարհ. 'ի Հայաս. և 'ի Լազիս.